ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N 162 - Ա **26 օգոստոսի 2016 թ.**

ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ, 1.15-րդ կետերի դրույթներով

կարգադրում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի համայնքներում հողօգտագործման բնագավառում առկա հիմնախնդիրների՝ անշարժ գույքի առաջին պետական գրանցման և քարտեզագրման ժամանակ թույլ տրված անճշտություններն ուսումնասիրելու և վերացնելու համար ստեղծել մշտական հանձնաժողով հետևյալ կազմով.

Ղուրշուդյան Մարատ – մարզպետարանի աշխատակազմի հողաշինարարության և հողօգտագործման բաժնի վարիչի տեղակալ, հանձնաժողովի նախագահ

Բուդումյան Խաչիկ - մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետի տեղակալ

Օհանյան Հրանդիկ - մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների գործունեության համակարգման բաժինի վարիչ

Աղեկյան Ատոմ - մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության բնակարանային և ենթակառուցվածքների բաժնի գլխավոր մասնագետ, հանձնաժողովի քարտուղար

Խաչատրյան Խաչատուր - ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Գեղարքունիք մարզային ստորաբաժանման հաշվառման տվյալների մուտքագրման բաժնի գլխավոր մասնագետ /համաձայնությամբ/

2. Հանձնաժողովին՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի համայնքների ղեկավարների կողմից հողօգտագործման բնագավառում բարձրացված խնդիրների հիման վրա համապատասխան համայնքներում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կատարել ուսումնասիրություններ և առկա խնդիրների վերացման ուղղությամբ ներկայացնել առաջարկություններ:

3. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել ՀՀ Գեղարքունիքի մարզպետի տեղակալ Կարեն Հակոբյանին:

2.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ ԳՐԻԳՈՐՅԱՆ